ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 15-ից 18-ը Նիդերլանդների Թագավորություն գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ՝**

Մերի Աղաջանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**

2025 թվականի հունիսի 15-18-ը, Նիդեռլանդներ (Շիպհոլ-Ռեյկ)

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝**

JAA TO ուսումնական կենտրոն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**

ԻԿԱՕ հավելված 19-ի, ԵՄ 376/2014 կանոնակարգի վերաբերյալ ավիացիոն գիտելիքների և հմտությունների ձևավորում և զարգացում, ինչպես նաև քաղաքացիական ավիացիոն իրադարձությունների (պատահարների, լուրջ միջադեպերի և միջադեպերի) զեկուցման, վերլուծության և մոնիթորինգի գործիքակազմի վերաբերյալ հմտությունների ձեռք բերում

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Քաղաքացիական ավիացիոն իրադարձությունների (պատահարների, լուրջ միջադեպերի և միջադեպերի) զեկուցման կանոնակարգերի ուսումնասիրություն, վերջիններիս

արդյունավետ զեկուցման գործիքակազմի կազմում և դրանց միջոցով ավիացիոն պատահարների կանխարգելում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ.

Դասընթացի ընթացքում մասնակցել եմ դասախոսությունների, խմբային քննարկումների դասախոսական կազմի և դասընթացի մասնակից ավիացիոն ոլորտի մասնագետների հետ:

8. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» կիրառում, ինչպես նաև դասընթացի ավարտին գերազանցությամբ քննության հանձնում (100%):

Մերի Աղաջանյան
20.06.2025թ.